ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
05.06.2024թ. նիստի N 10 արձանագրություն

Օրակարգ

1.Առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորում:

2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի թիվ 10-րդ նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանի բացակայության պատճառով նիստը վարեց փոխդեկան Մ. Յաղուբյանը: Նա ողջունեց գործընկերներին և անցավ օրակարգի առաջին հարցին՝ առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորմանը:

- Լսեցին - Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 2-րդ տարվա ասպիրանտ **Հասմիկ Սարգսի Չալոյանի** ատեստավորման հարցը (թեմա՝ «Հակիրճ գործարար ներկայացումների միջմշակութային գործաբանական բնութագիրը», գիտական ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆեսոր Շ. Պարոնյան) Ժ. 02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն:

Արտահայտվեցին - Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասպիրանտ Հասմիկ Չալոյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է մի շարք սեմինարների, գիտահետազոտական աշխատանքներ կազմելու վերաբերյալ վերապատրաստման դասընթացների, արտասահմանյան մասնագետների կողմից իրականացվող մասնագիտական քննարկումների, որոնք մեծապես նպաստել են ատենախոսության տեսական հատվածը ուսումնասիրելու և ամբողջացնելու գործում: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում գիտական ղեկավար, բ. գ. դ. , պրոֆեսոր Շ. Պարոնյանի հետ պարբերաբար կազմակերպվել են խորհրդատվական բնույթի հանդիպումներ՝ ատենախոսության ներածական հատվածում հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը սահմանելու, ատենախոսության ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ հարցերը մանրամասնելու, ինչպես նաև առաջարկվող հնարավոր վարկածները և ատենախոսության յուրաքանչյուր ենթագլխում անդրադարձվող խնդիրները և այլ ընթացիկ հարցերը քննարկելու նպատակով: Այդ քննարկումների արդյունքում հստակեցվել է ատենախոսության կառուցվածքը, ձևակերպվել են գլուխների և ենթագլուխների վերնագրերը, սահմանվել է ատենախոսություն նպատակը, ձևակերպվել է հետազոտության գիտական նորույթը, և որոշարկվել է լեզվաբանական քննության մեթոդաբանությունը: Նա հավելեց, որ ուսումնասիրության ընթացքում տարբեր պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հարթակներից հավաքագրված հակիրճ գործարար ներկայացումները քննության են

առնվելու որակական և քանակական մեթոդաբանությունների կիրառմամբ: Հ. Չալոյանը ներկայացրեց իր կողմից ուսումնասիրված հեղինակների աշխատությունները, գրականության ցանկը փիտչինգ մրցույթներից ստացված ելույթների առանձնահատկությունները: Հ. Չալոյանը այժմ մշակում է անգլալեզու հոդված, որը կլուսաբանի հակիրճ գործարար ներկայացումների դերը միջմշակութային գործարար հաղորդակցության համատեքստում:
Գիտական ղեկավար Շ. Պարոնյանը նշեց, որ ասպիրանտի կատարած աշխատանքը ընթանում է ըստ սահմանված ժամանակացույցի և աշխատանքային պլանի:

Որոշեցին - Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքը՝ ատեստավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 2-րդ տարվա ասպիրանտ Հասմիկ Չալոյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ ***ԼՍԵՑԻՆ՝*** Արտասահմանյան գրականության ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ **Մարիամ Գուրգենի Մարտիրոսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մարիամ Մարտիրոսյանը**,** ներկայացնելով կատարած աշխատանքը, նշեց, որ իր թեկնածուական ատենախոսության թեման է «20-րդ դարի 2-րդ կեսի գերմանական պատմվածքը» /գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Արա Հրաչիկի Առաքելյան/ Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն: Մ. Մարտիրոսյանը եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի շրջանավարտ է, գերազանց տիրապետում է գերմաներենին, ինչը հնարավորություն է տալիս բնագրով ուսումնասիրելու ժամանակակից գերմանական գրականությունը: Նշվեց նաև, որ ասպիրանտը մասնակցել է դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտներ: Ատենախոսության 2 գլուխները պատրաստ են, ինչպես նաև տպագրության է պատրաստվում 2 գիտական հոդված ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական ամսագրերի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքը՝ ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Մարիամ Մարտիրոսյանին**: Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ ***ԼՍԵՑԻՆ՝*** Արտասահմանյան գրականության ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ **Ամալիկ Սնակի Բաղդասարյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամալիկ Բաղդասարյանը, ներկայացնելով կատարած աշխատանքը, նշեց ատենախոսության թեման՝ «Ստեղծագործական երկվությունը Էմիլ Աժարի (Ռոմեն

Գարի) երկերում» /գիտական ղեկավար՝ պրոֆ. Ա. Սեդրակյան, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն: Նշվեց նաև, որ նա ազատորեն տիրապետում է ֆրանսերեն լեզվին, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու ժամանակակից ֆրանսիական գրականությունը: Նա խմբավորել է գեղարվեստական և գիտական գրականությունը, ղեկավարի հետ հստակեցրել է ատենախոսության կառուցվածքը, կատարել է առաջնային աղբյուրների վերլուծություններ, գրականագիտական և մեթոդաբանական մշակումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով ասպիրանտի հաշվետվությունը և հաշվի առնելով 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքը՝ ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Ամալիկ Բաղդասարյանին**: Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ **ԼՍԵՑԻՆ** ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նարե Շալունցի**՝ 2023-2024 ուսումնական տարում կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նարե Շալունցը ներկայացրեց կատարած աշխատանքը՝ նշելով, որ իր թեկնածուական ատենախոսության թեման է «Մարդկային հատկանիշ արտահայտող առածների և ասացվածքների ճանաչողական-գործաբանական հայեցակերպը ֆրանսերենում (հայերենի զուգադրությամբ)», Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն, գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Հ. Բաղդասարյան: Նշվեց նաև, որ կրթական բաղադրիչի շրջանակում մասնակցել է 6 դասընթացի (ընդամենը՝ 27 կրեդիտ).

1. Անգլերեն,
2. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն,
3. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ,
4. Գիտության փիլիսոփայություն,
5. Անձնային աճ և ինքնակարգավորում,
6. Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ:

Հետազոտական հատվածի համատեքստում կազմվել է հետազոտության պլանը, ուսումնասիրվել թեմային առնչվող գիտական գրականություն, ինչպես նաև ատենախոսության գործնական հատվածի համար բառարաններից և լեզվաբանական կորպուսներից հավաքագրվել փաստական լեզվանյութ: Հստակեցվել է հետազոտության կառուցվածքը, նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը, օբյեկտն ու առարկան: Առածի՝ որպես լեզվամշակութային, լեզվաճանաչողական և լեզվագործաբանական

ուսումնասիրությունների առարկայի վերաբերյալ մեկ գիտական հոդված մշակման փուլում է. շուտով կհանձնվի տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով ասպիրանտի կատարած աշխատանքը՝ ատեստավորել ֆրանսիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Նարե Շալունցին**:
Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ **ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցմամբ երրորդ տարվա ասպիրանտ **Զարա Հայրապետյանի** (բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ս. Գասպարյան) ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Զարա Հայրապետյանը հեռավար ներկայացրեց կատարած աշխատանքների մասին հաշվետվություն, քանի որ գտնվում է գիտական գործուղման մեջ Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակում: Նա նշեց, որ իր ատենախոսության թեման («Լեզուն որպես իրավական դիսկուրսի հասկացման բանալի» Ժ.02.07. Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ) միջգիտակարգային է՝ լեզվի և իրավունքի փոխհատման ոլորտում: Այն նպատակ ունի պարզելու, թե ինչպես է լեզուն օգտագործվում փաստաբանի խոսքում ի շահ նրա պաշտպանյալի: Նշվեց նաև, որ նա մասնակցել է ասպիրանտական ծրագրում ընդգրկված տարբեր դասընթացների՝ հանձնելով բոլոր պարտադիր առարկաները՝ «անգլերեն լեզու», «տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» և «գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» և ընտրովի առարկաները՝ հավաքելով համապատասխան կրեդիտները: Նա հրատարակել է 2 հոդված, 3-րդը տպագրության մեջ է և այժմ աշխատում է 4-րդ հոդվածի վրա և նախնական տարբերակով շարադրել է աշխատանքի զգալի մասը (շուրջ 80%):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով անգլիական բանասիրության ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Զարա Հայրապետյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

05.06.24թ.